Վասն այսր քարանց՝ հանձնեցէք զիս պարոն Զաքարին, որ բնակի ի յԱլիքուչակ. նա գիտելով զտեղիսն հանքաց, խոստանա տանել զիս անդ՝ յաղագս որոնելոյ, որ ըստ պատմութեանս գովէ նա զտեղիս կուտակալ ջուհարիցն ոլոնձոյ գոյն զգոյն քարանցն որք են անդ։

Վասն այսր տուք ինձ ի գանձարանէն երեք թուման մանր փող զնամ որոնեմ, ըստ յաջողելոյն աստուծոյ որքան կարողանամ ձեռք բերեմ, թէ Ինասցէ դրամն՝ տամ Ձեզ. թէ պակասի տուք ինձ. և ի գնալս հրամայեցէք տալ ինձ հանդարտ երիվար մի լավ երիշով և պաշար ևս՝ թէ կամիք. ապա թէ ոչ այն եղիցի ի կամս Ձեր. գիտելով Ձեր այս քանս վասն օգտի և պարծանաց սրբոյ գահոյս և արժանընտիր գահակալի Մայրութեան սորին և Ձեր, ողջ լերուք հանապազօր վասն մեր։

Մնամ յամենայն սրտէ ջանադիր ծառայ սրբոյ գահոյս խոնարհ ծաղկազարդ եպիսկոպոս Իսահակ Մահտեսի Տէր Գրիգորեան Երևանցի։

Համար 65։
1837. յուլիսի 14.
ի սենեակն մեր։

4

Ի լուսավորչական Հայոց Սիւնհոդոսն էջմածնի ի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ։

Յայտարարութիւն։

Ըստ հրամանի անդամոյն Սիւնհոդոսի բարձր սրբազան աւագ լուսարարի Աթոռոյս Բարսղի արքեպիսկոպոսի յաղագս շինելոյ զպատաշ և նիշեստէի զոր և արարեալ մեր հանձնեցաք վերատեսչի տպարանի Աթոռոյս մասնաւոր Յովհաննէս վարդապետի որք են երկու լիտր պատաշ և չորս խտիլ ինն մըսխալ. նիշեստէն երեք լիտր և կես չայրէք. և զծախսն այսոցիկ ընկալեալ եմ ի վերոյ յիշեալ բարձր սրբազնութենէ՝ անդամոյդ ի Բարսղէ արք եպիսկոպոսէ, հինգ լիտր քալայքար, իւրաքանչիւր լիտրն երեք աբասով առնէ երեք հազար դրամ վեց մշակ՝ իւրաքանչիւրն տասն շահիով նոյնպէս առնէ հազար դրամ և չորս կաղ տոպրակացու կըտաւ, կաղն մի մի ապաստով, ութն հարիւր դրամ, զորս ստացեալ եմ ի բարձր սրբազնութենէն վերոյ յիշեալ. և ահա ընդ սմին ներկայացուցանեմ զթուղթ ստացական վերատեսչին տպարանի մասնաւոր Յովհաննէս վարդապետին առ որ խնդրեմ տնօրինութիւն Սիւնհոդոսիդ։

Ի 16 օգոստոսի 1839։
Սուրբ էջմիածնի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս